

կրնար ունենալ իր կայքը նահանգի մը մէջ, որ թափուր էր զօրաբաժիններէ :

Կորբուզոն հակառակ իր պաշտօնին անմիջական շրջանակին մէջ տեղի ունեցած փոփոխութեան, մինչեւ 66ի աշունը պատասխանատու խնամածուն էր հայ աւատական պետութեան հետ յարաբերութիւններուն : Թէ Գ Գաղղիականը 64ի ամառը իր հսկողութեամբ Մոփղի բերդը շինած ըլլայ (Գլ. Ա, յօդ. 3) չեմ ուզեր պնդել, վասն զի այն կրնայ անոր տեղափոխումէն ետքն ալ կատարուած ըլլալ : Բայց նոյն տարին Կորբուզոնի դեռատի փեսան Աննիոս Վինիկիանոս Տրդատի կ'ընկերակցի, բնական է իր աներոջ հրամանաւ, դէպի Հոռոմ եւ հոն կայսեր կողմանէ, հակառակ անոր, որ դեռ ծերակոյտի անդամ էր, մեծապէս կը պատուուի (Դիոն. ՀԲ, 23) : Իսկ երբ Տրդատ 66ի աշնան յունական արուեստագէտներու ստուար խումբ մը Արտաշատի վերաշինութեան համար հետը կը բերէ, դարձեալ Կորբուզոն է, որ սահմանէ անցքին աւատառուին ծախքերուն չափ կը դնէ (Դիոն. ՀԳ, 6, 6) :

Սակայն հայ աւատական պետութեան վրայ հսկողութիւնը, զոր Կորբուզոն մինչեւ իր յետակոչումը գործադրած է, կրնայ նաեւ պոնտական նահանգին իշխանութեան ծիրին մէջ նկատուիլ, քանի որ Հայաստան անոր հետ երկար սահմանակցութիւն մը ունէր : Արտաղարգ վերին հրամանատարութեան տեղափոխեան հարցին համար որոշիչ են Կորբուզոնի յարաբերութիւններն Ասորիքի պատուիրակին՝ Կեստոս Գաղղոսի հետ, որ 63ին անոր ստորակարգեալ զօրավարն եղած էր եւ յետոյ անոր հետ միաժամանակ ետ կանչուեցաւ : Առանց ծանրանալու Գաղղոսի հրէական դժբախտ աղէտին պատմական նշանակութեան վրայ, հոս մատնանիչ կ'ընենք միայն, որ կայսրն անհամեմատ ծանր պարտութեան յանցանքը պատասխանատու զօրավարներուն վերադրեց եւ անոնց ետ կոչուելուն որոշումը տուաւ :

Սակայն ոչ միայն Գաղղոս, այլ նաեւ Կորբուզոն 66—67ի ձմրան ետ կանչուեցաւ եւ Յունաստան ցամաք ելած պահուն բռնադատուեցաւ անձնասպան ըլլալու⁴ : Կորբուզոն իբրեւ արեւելեան բանակին վերին հրամանատարը եւ Ասորիքի պատուիրա-

կին պետը՝ պատասխանատու համարուեցաւ զբաւման բանակին անբաւական թուոյն համար :

Վերջապէս՝ ասիական վերին հրամանատարութեան պահպանման համար կայ նա' եւ ընդհանուր քաղաքագիտական պատճառ մը : Ստոյգ է, պարթեւական խաղաղութիւնը 63ին եւ 64ին հաստատուած էր, սակայն դաշինքը դեռ չէր վաւերացուած, արեւելեան ստուարաթիւ բանակին միասնական վերին հրամանատարութիւնը դոնէ այնչափ ժամանակ պէտք էր տեւել, մինչեւ որ Տրդատ դէպի Հոռոմ պայմանեալ ուղեւորութիւնն սկսէր եւ այնպէս դաշինքի կատարման իրական կամք մը ցուցնէր : Ուրեմն թէ՛ Կորբուզոնի ընդհանուր կուսակալութիւնը եւ թէ՛ բանակին երկու դանուբեան լեզէոններով ուժեղացումը, մինչեւ 66ին դարունը պահուած ըլլալու են : Ուստի Կորբուզոն մինչեւ իր յետակոչումն, իբրեւ պատուիրակ Պոնտոսի եւ Գաղատիայի, արեւելեան ստուարացած բանակին հրամանատարն էր : Իբրեւ այսպիսի՝ ոչ միայն պարթեւ եւ հայ սահմաններուն ապահովութեան, այլ նաեւ աղուանեան պատերազմին պատրաստութեան վրայ կը հսկէր :

Արեւելքի մէջ Կորբուզոնի իշխանութեան տակ կը գտնուէին 67ին երկու դանուբեան լեզէոնները. երբ նոյն տարւոյն սկիզբը Վեսպասիանոս Հրէից դէմ վերին հրամանատարութիւնը ստանձնեց Ե-Մակեդոնականը եւ ԺԵ Ապոլինարեանն, ինչպէս գիտած է Մոմսէն (Հռ. Պ. Ե, 533), դեռ իրենց հայրենի նահանգները չէին վերադարձած, ասոր լաւագոյն ապացոյցը կու տայ Յովսեփոսի լեզէոններու տախտակը⁵ : Այսպէս ուրեմն Կորբուզոն մինչեւ Տրդատի Հոռոմ հանիլը դեռ ձեռքին տակ ունէր այն եօթը լեզէոնները, որոնք իրեն յանձնուած էին պարթեւական մարտին համար : Բայց որովհետեւ Յովսեփոս դժբախտաբար այս եօթը լեզէոններու ասիական նահանգներու մէջ ո'ւր դետեղուած ըլլալն անյիշատակ կը թողու, ստիպուած ենք անդրադոյն աղբիւրներու հիման վրայ ստուգել անոնց բանակավայրերը :

Հայ սահմանին վրայ հաստատուած բանակաբաժինը 63ին կը բաղկանար չորս ընտիր լեզէոններէ՝ Գ Գաղղիական, Ե Մակե-

⁵ Հր. Պատեր. Բ, 366 յջ. հմտ. առ այս Դոմաշևսկի Kh. Mus: 47, 207 յջ. եւ Վերեր Josephus und Vespasian, 1921:

⁴ Դիոն. ՀԲ, 17, 5. Տակ. Պատմ. Գ, 6:

դոնական, Զ Երկաթապատ եւ ԺԵ Ապոլինարեան, մինչդեռ Կեստոս Գաղղոսի Ասորիքի զօրամասը կը կազմէին հետեւեալ երեք լեզէոնները՝ Դ Սիլիւթական, Ժ Փրետենեան եւ ԺԲ Ծանթաւար : Քիչ ետքն եղած փոփոխութիւններուն կը ծանոթանանք Յովսեփոսի Կեստոսի բանակին վրայ տուած տեղեկուելիւններէն, երբ այս զօրաբաժինը 66ին Հրէաստան մեկնած է պատժական արշաւի մը համար : Այդ արշաւին մասնակցած է բացի ԺԲ Ծանթաւարէն նաեւ Զ Երկաթապատը իր օժանդակներով (Հր. Պատեր. Բ, 500, 544) : Ուրեմն այս ընտիր լեզէոնը միջնաժամանակին Կեստոսի խումբին անցած է. այս երկու լեզէոններէն զատ ոչ-լիարժէք Դ Սիլիւթականն ալ Ասորիքի ապահովութեան զօրակազմին մէջ հաշուելու է : Իսկ Ժ Փրետենարեանն մէջ հաշուելու է : Իսկ Ժ Փրետենեանն այդ միջոցին Մեղիտինէի մէջ Հայաստանեան այդ միջոցին Մեղիտինէի մէջ Հայաստանի սահմանապահն էր (Հր. Պատեր. Ե, 17) : Թէ ա'րդեօք ան ալ Կեստոսի հրամանատարութեան շրջանին մէջ էր, կը մնայ ստուգելի :

Պարթեւական խաղաղութեան կնքումին յաջորդող տարիներու մէջ հայ սահմանին վրայ ամբողջութիւններու դիմ մը կատուցուած չէ. Տակիտոս (Պատմ. Բ, 6) կը յիշէ հոն դեռ տեղուած գունդերն այն բանակաբաժիններու մէջ, որոնք 69ի կիսուն Վեսպասիանոսի դահակալութեան նպաստած են : Ստորին Արաւածանոյ վրայ շինուած բերդին կառուցման վրայ շինուած է Գ Գաղղիականը : ման 64ին մասնակցած է Գ Գաղղիականը : Կայեանը, ուսկից այս յատկապէս դերը կ'ընեն եւ պահուած է, անշուշտ Մեղիտինէի բանակետոյն էր, Արածանոյ եւ Եփրատի գետախառնուքի դէմը, ուր 62ին Կորբուզոն իր բանակը դռմարած էր եւ ուր 66ին Ժ Փրետենեանը, իսկ 70էն ասորին ԺԲ Ծանթաւարը տեւականապէս հաստատուած էր (Հր. Պատեր. Ե, 17, 18) :

Ուրեմն 64ին եւ 66ին Զ Երկաթապատը փոխանորդելով Ժ Փրետենեանն անցած է Ասորիք, իսկ վերջինս իր կարգին Մեղիտինէի մէջ Գ Գաղղիականին տեղը բռնած եւ զայն ուրիշ նպատակներու համար ազատ թողած է : Յայտնի կ'երեւայ, որ Գ Գաղղիականը նոր ձեռնարկի մը համար երկու իլիւրական լեզէոններու հետ փոքր Ասիայի մէջ տեղ մը պատրաստ պահուած է :

Թէ այս բանակամասը ո'ր նահանգին մէջ հաստատուած էր կը դուշակուի արդէն

լուսածներէն. իր կայեանը կրնայ ըլլալ միայն Պոնտոս եւ Գաղատիա նահանգը, որ ինչպէս տեսանք, աղուանեան արշաւին մեկնակէտն ըլլալու սահմանուած էր : Իբրեւ կուսակալ այդ նահանգին, Կորբուզոն նոր արշաւին պատրաստութիւնները տեսած էր, անոր համար ալ հոն համարած է պատերազմիկ զօրը եւ մարտական կազմով օժտած :

Ռազմական ծանրակէտին դէպի հիւսիս այս տեղափոխումին հետ անշուշտ կապ ունի Ասորիքի բանակը հրամանատարութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը : Ասորիքի բանակը չորրորդ լեզէոնով մը զօրացուած է, որ Մեղիտինէի քով Տրդատապատ եւ Արտաշատ տանող ճամբուն վրայ կը հսկէր : Եթէ այդ լեզէոնը ստորակարգուած չէր Կապադովկիայի պատուիրակին, որ Յովսեփոսի եւ Տակիտոսի վկայութիւններու համաձայն զինուորական հրամանատարութիւն չունէր, այն ատեն հաւանական է, որ Ասորիքի պատուիրակին իշխանութեան է, որ Ասորիքի պատուիրակին իշխանութեան է, որով վերջինս մարտագործին հիւսակ ըլլար, որով վերջինս մարտագործին հիւսակ եւ արեւելք տեղափոխուելուն ժամանակ սահմանապահութեան համար երկու ընտիր սահմանապահութեան համար երկու ընտիր լեզէոն իսկ ուստիականական նպատակներու համար երկու ոչ-լիարժէք լեզէոն ընդունած է : Այժմ պիտի տեսնենք թէ Տրդատի մեկնումէն ետքը՝ վերին հրամանատարութիւն իր ձեռքը մնացած երեք ընտիր լեզէոններու վրայ ինչպէս արամադրած է :

2. Պատերազմի պատրաստութիւնները 66 տարւոյն :

Մեր առաջնորդը պիտի ըլլան դարձեալ Յովսեփոսի հրէական պատերազմին առթիւ գունդերու շարժումներու վրայ տուած տեղեկութիւնները : Վեսպասիանոս 67ի գարնան փոքր Ասիայէն պատերազմի վայրը մեկնելով Ե-Մակեդոնականը եւ Ժ Փրետենեանն Անտիոքի վրայէն Պաղոմայիս, իր գործողութիւնները կը կոչէ (Հր. Պատեր. Գ, 29, 65) : Այս լեզէոններէն մին Պոնտոս հաստատուած արշաւագործին կը պատկանէր, մինչ միւսը Մեղիտինէի մէջ սահմանապահ նշանակուած էր : Ասոր տեղն անցած է հաւանաբար դարձեալ Գ Գաղղիականը, որ այնուհետեւ Լիկիոնի Մուկիանոսի ասորական սահմանապահ գունդին մէջ կը յիշուի

